ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ ԱԻՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ՝

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

<12>> <<12>> 2017 թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

## ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** <<12>> <<12>> 2017թ.

**Ժամը 12:00**

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

**Վ.Օհանյան**- ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ:

**Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ**

**Լ. Հովհաննիսյան՝** ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ:

**Ա.Գրիգորյան՝** ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվարկային բաժնի առաջին կարգի մասնագետ:

**Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

**Ա. Բաղդասարյան՝** ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության տնտեսական բաժնի պետ-պարետ:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**Ա. Մարգարյան՝** ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության փորձագետ:

<< Ֆլեշ>> ՍՊԸ-ներկայացուցիչ **Ա.Ներկարարյան**

Բացակայում էր **Մ. Գասպարյան:**

1. Համաձայն <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կազմակերպված **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17** ծածկագրով ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման մասին.

1.1. Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղարկվել է էլեկտրանային գնումների կայքում՝ armeps.am և օրենքով սահմանված կարգով հրավերը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:

**1.2 Հիմք ընդունելով** ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետը **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց գնման հայտով սահմանված առավելագույն գները մեկ թվով արտահայտված՝

| Չ/Հ | Գնման առարկայի Անվանումը | Գնման հայտով սահմանված առավելագույն գներ |
|---|---|---|
| 1 | Բենզին Ռեգուլյար | 16 245 000 |

**1.3.**Գնային առաջարկ պարունակող ծրարը բացվել են էլեկտրոնային եղանակով.

**1.4.** Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N N | Մասնակցի անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1. | << Ֆլեշ>> ՍՊԸ | Ք.Երևան Ե.Կողբացի 30 |

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

**2.** Տվյալներ՝ ծրարները կազմելու, ներկայացնելու և սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

**2.1** Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

**3.** Տվյալներ՝ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

**3.1 ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակիցը ներկայացրել է մասնակցության դիմում,հայտի ապահովում, գնային առաջարկ և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

**4.** Մասնակցի առաջարկած գինը՝ **առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/:**

| Չ/Հ | Գնման առարկայի Անվանումը | << Ֆլեշ>> ՍՊԸ |
|---|---|---|
| 1 | Բենզին Ռեգուլյար | 14 250 000 |

***մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող:**

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

**5.** Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա. պարբերությունը **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի միակ մասնակից << Ֆլեշ>> ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցչի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ,որի արդյունքում գինը << Ֆլեշ>> ՍՊԸ գինը նվազեցրեց 16 245 000 ներառյալ ԱԱՀ: Հաշվի առնելով որ բանակցության արդյունքում առաջարկված գնային առաջարկը չէր գերազանցում գնման հայտով սահմանված գնին << Ֆլեշ>> ՍՊԸ-ն ճանաչվում է առաջին տեղ զբաղեցնող:

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

**6.** Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար << Ֆլեշ>> ՍՊԸ -ն՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ( mes.gnumner@mail.ru) ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

**Կողմ՝ 4 Դեմ՝ 0**

7. **ՈԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-17/17** ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ Կառավարության **04.05.2017թ** 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում՝ **19.12.2017թ**. ժամը **12.00**-ին:

**8.**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

**Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու**

**Վ. Օհանյան**

**Անդամներ ՝ ԳՊ/ԲԱ –բացող անձնակազմ**

**Լ. Հովհաննիսյան**

**Ա.Գրիգորյան**

**Անդամներ ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ**

**Ա. Բաղդասարյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**Ա.Մարգարյան**